

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՂԵՐԻ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ «ՕՇԻՆ ՊԱՅԼ» ԴՐԱՄԱՅՈՒՄ

Խ. Գ. ՎԱՐՂԱՆՅԱՆ

Իր թատերգության կարապի երգը՝ «Օշին Պայլ» դրաման, Լ. Շանթը ստեղծեց 1929-ին՝ վաթսուհամյա գրողի համար անսովոր կենտրոնացումով, քանի որ այս անգամ նա ընթերցողին, արվեստասեր հասարակությանն էր ավանդում իր ողջ գիտակցական կյանքում ապրած, հանրային ու քաղաքական գործունեությամբ ստուգված, ճշգրտված խոհերն ու զգացմունքները: Ստեղծում էր իր կյանքի գործը, որ այնքան ազդեցիկ պիտի լիներ հայոց պատմությունից ընտրված բնորոշ դրվագի և գերազանցորեն բնորոշ հերոսներով կատարվող ընդհանրացումների շնորհիվ:

1320-ական թվականները հայոց Կիլիկիայի հետագա գոյության ուղղությամբ ճակատագրական եղան: Թագաժառանգ Լևոնի անչափահասության պատճառով պայլ կարգված Օշին իշխանը՝ Կոռիկոս բերդի տերը, գնահատելով երկրի համար ստեղծված իրադրության ողջ լրջությունը, կտրուկ միջոցների է դիմում պետությունը ներսից ու դրսից ամրացնելու, ուժեղացնելու ուղղությամբ: Հենվելով ազգային կողմնորոշում ունեցող ուժերի վրա՝ նա վճռական միջոցներ է ձեռնարկում հայոց անկախ պետականությանը սպառնացող լատինամետ տարրերի դեմ: Սակայն պայլի ազգաշեն, երկրի համար կենսական գործունեությունը ընդհատվում է պատանի Լևոն Ե արքայի վարած լատինամետ քաղաքականությամբ: Նա մահապատժում է Օշին Պայլին, նրա թագուհի դստերը՝ Ալիսին և սպարապետ եղբորը՝ Կոստանդինին՝ արքունիքում տնօրինելու լայն հնարավորություն տալով լատինամետ ուժերին, որը ողբերգական է լինում Կիլիկիայի համար: Պապական խարդախ քաղաքականության հետևանքով մեծ չափերի են հասնում պետության ներսում գործող կրոնական հիմքով ներհակ ուժերի հակամարտությունները, որից հիմնովին թուլացած հայոց Կիլիկիան գնում է անխուսափելի կործանում:

Հայ կաթոլիկ մտածողները պատմական այս անցուդարձերը գնահատում են որպես սովորական պալատական խարդավանքներ, իբրև ավատատիրական շահախնդրությունների արտահայտություն:

Հայոց Կիլիկիայում պատմական զարգացումների տրամաբանությունը հասկանալու և ցուցադրելու հարցում Լ. Շանթը խորապես հարազատ է պատմագիտության մեջ իշխող տեսակետներին:

Ասենք, որ այս հարցը քննող Մխիթարյան ուխտի ներկայացուցիչները, կաշկանդված լինելով կաթոլիկությամբ, չեն կարողացել անաչառ լինել, որով և պատմության մեջ ազգային միասնական եկեղեցու սատարումով համաձայն, բզոր հայության ասպետները դիտվել ու դիտվում են որպես վնասակար, մոլեռանդ մարդիկ:

«Օշին Պայլ» դրամայում գլխավոր հերոսը՝ Օշինը, բացառիկ է Կիլիկիայում հայոց անկախ պետականության հարատևման գործոնի իմացությամբ: Մինչ պալատ՝ որպես պայլ հրավիրվելը և բարձր իրավասությամբ օժտվելը նա ներսույզ խորհրդածել է հայոց Կիլիկիայի անցած պատմական ուղու շուրջ և արմատապես համոզվել, որ Կիլիկիայի անկախ հայկական թագավորության հիմքը, նրա հարատևման միակ գործոնը հայ տարրն է, հայի՝ քաղաքական

կենսունակությունն ստեղծող հոգևոր միասնությունը: «Մեր այս Կիլիկիայի թագավորությունը,- ասում է Շանթի հերոսը,- մարդի մը կը մմանի, ապրող, կենդանի էակի մը: ... Եվ այդ ապրող ու աճող էակը հայն է, հայ տարրը այս հողերուն վրա, հայ հոգին, հայ պետականությունը: Ատոր համար է, որ Լուսինյաններու, Ամորիներու և բոլոր լատինական խմորի մարդոց ազդեցությունը միայն տկարացում կբերեն այս երկրին»¹:

Իմ կողմից ընդգծված արտահայտությունը դրամայում պետք է կրոնական իմաստով հասկանալ՝ իբրև ոչ հայադավան, կաթոլիկ, որոնք էթնիկապես «ֆրանկ» ծագումի են կամ ծնունդ խառն ամուսնության՝ «ֆրանկ» և հայ: Դրամայում, նաև պատմագիտական գրականության մեջ արդեն զուտ կրոնական պատկանելիության առումով են օգտագործվում լատինամետ, լատինամոլ արտահայտությունները, որպիսիք արդեն էթնիկապես հայեր են միայն:

...Կրոնի՝ իբրև գաղափարաբանության ըմբռնումը այնքան է հին, որքան հին է ինքը՝ կրոնը: Կասկածից վեր է, որ մեզանից 1700 տարի առաջ առավել կենսունակ, առաջավոր հայկական գաղափարաբանություն ունենալու համոզմունքով են առաջնորդվել Տրդատն ու Լուսավորիչը, որքան էլ այսօր Խ. Աբովյանի և Բաֆֆու, Դ. Վարուժանի ու Պ. Սևակի նպաստումով մենք ապրենք հայոց հին հավատքով պայմանավորված աշխարհայացքային գծերի կորստյան ցավը:

Հինգերորդ դարի արշալույսին արդեն մեր լուսեղեն *թարգմանիչների* հայացքած Աստվածաշունչ մատյանով արմատավորվեց հայկական դրոշմով ու բնավորությամբ մի քրիստոնեություն², որը հետագա ձիգ դարերի ընթացքում դարձավ հայոց ազգային գաղափարաբանություն, *հայկական քաղաքականություն* (ընդգծվածը Ռ. Պատկանյանի գնահատականն է՝) և հոգևոր զրահի դեր կատարեց մարդկային մեր տեսակի պահպանման և ինքնահաստատման ուղղությամբ: Այն ձիգ դարերով եղավ ու մնաց մեր ազգային-բարոյական նկարագրի անաղարտության պահպանը՝ խորապես գաղափարական-քաղաքական մեծագոր երևույթ:

Քրիստոնեական «քույր» եկեղեցիների միջև դավանաբանական հակասությունները սկիզբ են առել դեռևս 449 թվից՝ Եփեսոսի երկրորդ ժողովից: Քիչ անց՝ 451-ին, Քաղկեդոնում զումարված ժողովի որոշումներում արդեն ձևակերպվում է այդ հակամարտությունների ամենաէական կանոնը՝ Քրիստոսի երկաբանակ՝ Աստված և մարդ լինելու մասին: Մինչ այդ՝ Եփեսոսի 431-ի ժողովից հետո, հանդես էին եկել միաբանակների քրիստոնեական աստվածաբանական սկզբունքի հետևորդները, որոնք առաջնորդվում էին Կ. Պոլսի վանահայր Եվտիմեոսի՝ ծայրահեղության հասցրած ըմբռնումով, որի համաձայն «Քրիստոսի մեջ մարդկային բնությունը կլանված է աստվածայինով»³:

Կրոնական հակամարտությունների սրումը, որ հետևանք էր «գերակայու-

¹ Լ. Շանթ, Երկեր, հ. 4, Պեյրուք, 1949, էջ 12: Այսուհետև շարադրանքում փակագծերի մեջ, միայն էջը:

² Այս կապակցությամբ հետաքրքիր դիտողություն է կատարել Նիկողայոս Մառք Սորբոնի հայ ուսանողության համար կարդացած դասախոսության մեջ: Տե՛ս նրա «Հայկական մշակույթ» գրքուկը, Եր., 1989, էջ 22:

³ Տե՛ս Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 7, Եր., 1979, էջ 276: Հայոց Մակար կաթողիկոսին ուղղված նամակում այսպես գնահատելով մեր եկեղեցին ու կրոնը՝ Պատկանյանն այնուհետև գրում է. «Բանի վրա այսպես նայում են ազգիս իսկական, իմաստուն որդիք...»:

Այդպիսի որդիներից լավագույնը և մատերիալիստորեն մտածողը իր «Երկու տող» աշխատության մեջ հայ կրոնավորներին՝ իբրև հոգևոր սպասավորների արմատապես քննադատելով՝ մինևույն ժամանակ ընդունել է, որ, ընդգծում եմ, «եկեղեցին ազգն է» (Միքայել Նալբանդյան, Երկերի լիակտար ժողովածու, հ. 4, Եր., 1983, էջ 16):

⁴ «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 7, Եր., 1981, էջ 522:

թյան նկրտումների», որ «դավաճաբանական վեճերը լույս պատրվակ էին»⁵, ի վերջո հանգեցրին հայ և կաթոլիկ եկեղեցիների կապերի խզման: Եվ 506 թ. Դվինի եկեղեցական ժողովում, դատապարտելով թե՛ եվտիքեսյաններին և թե՛ քաղկեդոնականներին, հայոց եկեղեցին հավատարիմ մնաց Եփեսոսի տիեզերական ժողովի վարդապետությանը, ըստ որի Հիսուս Քրիստոսի մեջ աստվածայինն ու մարդկայինը միավորված են անխառն ու անբաժանելի կերպով:

Այսպիսով հայոց եկեղեցին ձգտել է գերծ մնալ Բյուզանդիայի քաղաքական ազդեցությունից, ազատվել նրա համաձուլարար քաղաքականությունից: Եվ դարերով Հայաստանյայց Առաքելական եկեղեցին հանդես է եկել իբրև հայ նախարարական պետականության և օրենսդրության գլուխ: Ֆեոդալական Հայաստանի օրենսդրությունը ներկայացրել է հիմնականում եկեղեցական կանոններով: Այդ կանոնների ամբողջությունը կազմել է «կանոնագիրք հայոց»-ը, որը իբրև «պատմա-իրավաբանական նյութերի ժողովածու, իրավամբ հանդիսանում է հայ միջնադարյան բազմաբովանդակ մատենագրության խոշոր հուշարձաններից մեկը»⁶:

Օտարի կրոնական գերակայությունը՝ որպես գաղափարական-քաղաքական պարտադրանք, չէր կարող չխթանել հայ մտքի դիմադրողական ներուժը և ծնունդ չտալ միջնադարյան մատենագրության էական ճյուղերից մեկին՝ Մանուկ Աբեղյանի ձևակերպումով՝ դավաճաբանական պայքարի գրականության⁷, որի սկիզբը նա համարում է Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն» թարգմանական գործը և հենց V դարից վկայակոչում երկու կարևորագույն դեմքերի համարձակ մեկական թուղթ՝ Քերթողահայր Մովսես Խորենացու և կաթողիկոս ու նշանավոր գործիչ Հովհան Մանդակունու⁸:

Լ. Ծանթը, անշուշտ, ծանոթ պետք է լիներ այդ գրականությունը ամփոփող նշանավոր ժողովածուներին՝ «Գիրք թղթոց» (Թիֆլիս, 1901), «Կնիք հավատոյ» (Էջմիածին, 1914) և այլն:

«Օշին Պայլ» դրամայի ողջ գործողության ընթացքում կենսական բարդ ու գունագեղ ձևի մեջ ցուցադրվող ճշմարտությունը՝ կրոնադավաճաբանական հիմքով, բացարձակապես դուրս է ազգայնական նեղմտության, ազգային կաղապարվածության արտահայտումից: Ընդհակառակը, այն իր հայկական ձևի մեջ պատմական օրինաչափության ուժ ունի յուրաքանչյուր ժողովրդի ու պետության համար և միայն մեզ կարող է զուտ հայկական երևույթ թվալ, քանի որ այնքան ցավազնորեն ճշմարտվել է մեր ողջ պատմության ընթացքում՝ այդ պատմությունը դարձնելով «ամենամեծ կրոնական պատերազմների պատմություն»,- ինչպես նկատել է Դերենիկ Դեմիրճյանը իր «Հայր» փոքրածավալ վերլուծական-խոհազարկական երկում: Այս հիմքով է մեծ գրողը ցուցադրել «հայկական պարադոքսներից» մեկը, ըստ որի միշտ հայի «մի ձեռքը ճանկոտտելով հիմնում է իր պետությունը, մյուս ձեռքը ճիգ է անում հիմքից քանդելու»¹⁰:

Լ. Ծանթի դրամայում արդեն գլխավոր հերոսին որպես պայլ (գահի հովանավոր, թագավորահայր) պալատ հրավիրող պատվիրակության անդամները, պետությանը մոտ կանգնած ամեն ոք ամենից առաջ «լատինական խմորի մար-

⁵ Գ. Ա. Մաղոյան, Գրիգոր Անավարզեցին շարականագիր, Եր., 2001, էջ 8:

⁶ «Կանոնագիրք հայոցի»-ի գիտական հրատարակությունն իրագործվել է երկու ստվար հատորով՝ աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Բ. Ա. Եր., 1964, Բ. Ա. Եր., 1971: Մեջբերված գնահատականը տե՛ս Բ. Ա. էջ IV-ում:

⁷ Տես՝ Մ. Աբեղյան, Երկեր, Բ. Գ, Եր. 1968, էջ 392:

⁸ Տես՝ նույն տեղը, էջ 394, 396:

⁹ Գ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, Բ. 14, Եր., 1987, էջ 462:

¹⁰ Լ. Մեերոպ Վ. Ծանաշյան, Ծաղկաքաղ արդի հայ գրականության, Բ. 1, Վենետիկ, 1957, էջ 511: Ցավոք, հնարավոր չէ նախորդ աղբյուրը հղել, որ գետեղված է «Հայր» սովետական գրաքննության մեղմացման շրջանում (1987 թ.) Դ. Դեմիրճյանի երկերի 14 հատորը խմբագրողը այնպես է կրճատել ու աղճատել այդ ստեղծագործությունը, որ առկա վիճակով կարող է ընթերցողին անզամ թյուրիմացությունների մղել:

դոց», նրանց ազդեցությամբ մտածող ու գործող դավանափոխների մեջ են տեսնում հայ պետությանը սպառնացող վտանգը: Եվ պետության դեկը որպես պայլ իր ձեռքը վերցնելով՝ Օշինը անմիջապես բախվում է այդ տանու թշնամուն՝ միշտ հավատարիմ մնալով իր պարզած ճշմարտությանը: Այս ուղղությամբ հետևողական գործելով էլ՝ նա բարձրանում է որպես առաջին մեծության պետական այր, ազգային նվիրվածության անխոնջ ու անձնագոհ մարտիկ:

Դրամայում Օշինից բացի հայոց պալատում, փոքր բացառությամբ (Մխիթար, Հեթում), «չեզոք» մարդիկ են, քաղաքական բախտախնդիրներ կամ ծպտըված թշնամիներ:

Մխիթարը հոգևորական է, հայոց ոգու գանձերի հավաքող ու հետազոտող: Մինչ Օշին Պայլի անառարկելի կամքով պալատում հաստատվելը նա շրջել է գյուղ ու շեն, բերդ ու ամրոց, ունկնդրել ու գրի է առել հայ երգն ու տաղը: Մխիթարը ոգու ներկայացուցիչ է պալատում: Նրա շնորհիվ պիտի ազգային շունչ թևածեր հայոց արքունիքում: Այս հերոսը մեզ հիշեցնում է Կոմիտասին, և, իհարկե, Օսանթին հենց Կոմիտասն էլ նախակերպար է ծառայել Մխիթարի համար:

Հեթումը Օշինի մտերիմն է ու համախոհը: Այս կենսախիճ մարդը պալատում զբաղեցնում է *սեննշալի*՝ պալատի ու երկրի ներքին ապահովության պատասխանատուի կարևոր պաշտոնը և Օշինի քաղաքական մեկուսացման պահին նրա հետ է: Միայն պայլի կտրուկ ստիպումով է նա թողնում խոտվարարների կողմից գրեթե արդեն գրավված պալատը:

Օշին, Մխիթար, Հեթում ծնող ժողովրդի մեջ աննպաստ հանգամանքներից ձևավորվում է քաղաքական ուսիճների բազմություն, որը համազործակցում է դրսից մեզ հոգևոր այլասերում պարտադրող ուժերին ոչ միայն նրանց հեճարան ծառայելով, այլև դառնալով նրանց կործանարար գաղափարաբանության քարոզիչը:

Տեսնենք, թե իր արմատից ու հոգևոր ինքնությունից և այս հիմքով՝ իր հայրենիքի կենսական շահերից հրաժարված ու հեռացած վատը ինչ փոխհարաբերության մեջ է նենգ, բարոյականի ոչ մի սահման չճանաչող օտարի հետ: Երկուսն են՝ Պալոնց վարդապետը և Մաքսուտ Երանին՝ մեկը փառատենչ, միջոցների մեջ խտրություն չդնելով «բարձրանալու», բարգավաճելու մոլուցքից կուրացած արարած, մյուսը՝ մարդկայինը իսպառ կորցրած մի գոյություն, որ չունի գործընկերոջ «մեծ» ծրագիրը և կարող է վաճառվել ամենուր և ամեն գնով: Առաջինը իր վատթար գործարքի մեջ նախաձեռնող է, գործուն և անչափ վտանգավոր, երկրորդը հետևող է, բացած գործարքի սպասավոր, որին բավարարում է ամեն վճար, միայն թե այն լինի հնչուն կանխկով:

Այս մարդիկ են երկրի համար բախտորոշ մի պահի իրենց ողջ զագիր էությանը ցուցադրվում՝ հայության մոլի թշնամու հետ հայրենադավ գործարքի պահին: Եվ տեսնել է պետք, թե իր մտակույր էությանը բնորոշ ի՞նչ ոգեշնչում է ապրում Պալոնց վարդապետը պապի նվիրակ դը Օսպի հետևյալ խոսքերից:

Նվիրակը ... Ո՛չ են և ո՛չ ալ Քրիստոսի սրբազան փոխանորդը (Պապը— Ս. Վ.) ալ չեն մոռնար քեզի և քու բոլորանվեր նվիրումը: Բերած տեղեկություններուդ և նուրբ դիտողություններուդ համար շնորհակալ եմ... (65):

Քաջալերանքի այս խոսքերը լրտեսական նոր եռանդ են վառում Պալոնցի մեջ: Նա արդեն անբավարար է նկատում եղած կապի հնարավորությունները և ցանկանում է նվիրակին հաղորդակցվել իր սեփական նախաձեռնությամբ, երբ որ անհրաժեշտ համարի. «Իսկ երբ ինքս հաղորդելիք մը ունենամ», պարզաբանում է նա:

Նվիրակը հորդորում է պահպանել կապի նույն ուղին՝ նախապատվելով զգուշավորությունը... Սակայն թատերգակը անխոս հանկամալի է դարձնում, որ տվյալ պահին լրտեսապետը ամենակին էլ զգուշավորությամբ չի առաջնորդվում, այլ հայոց պալատում ունեցած իր մյուս բոլոր գործակալների տեղեկավորության հաշվառումով...

Պալոնց վարդապետը աշխատող բարդ սարքի մի հանգույցն է սուկ և չի կարող քմահաճ գործել:

Այս ամենը սքողելով՝ Նվիրակը սահուն անցնում է լրտեսի «բացատիկ ու շատ կարևոր դերի» ընդգծմանը:

Նվիրակը - ... դուրս մեր աչքն ես, դուրս մեր ականջն ես թագավորի պալատին մեջ: Մեծ հույսեր ունեմ քու վրադ. ձեր տեղացի տգետ ու նեղմիտ, մոլեռանդ ու աղանդավոր հոգևորականության մեջ քու ճկուն ու բաց միտքը զանձ մըն է աստվածատուր (65):

Կրոնի քողով համաշխարհային տիրապետության ձգտումը բնորոշ է եղել պապականությանը, և, ինչպես ցույց է տալիս պատմագիտությունը, խաչակրաց արշավանքները այդ նպատակով են կազմակերպվել: Խորամանկ, ծախու Պալոնցը կարծես հասկացել է այս ամենը և իր ծառայության արժեքը բարձրացնելու սակարկության մեջ մատը դնում է բուն տեղում:

Պալոնց - (Հափշտակությամբ) Մոնսեյնյո՛ր, ես կը ցանկամ, որ վերանան բոլոր մանր, տեղական ու ցեղական քրիստոնեությունները, վերանան մեջտեղեն զանազան եկեղեցիներն ու աղանդները. ես կը ցանկամ, որ բոլորը միացած՝ կազմեն միակ, մեծ, սուրբ ու ճշմարիտ քրիստոնեական եկեղեցին, քրիստոսի միահեծան թագավորությունը: ... Այո՛, ես հայ մըն եմ և հայ եկեղեցու վարդապետ մը: Ի՞նչ է հայը կամ ծագումը կամ տեղական մանր-մունր հաշիվները, երբ տիեզերական հավատքի մը, երբ համայնապարփակ իդեալի մը, երբ ընդհանրական քրիստոնյա եկեղեցիի մը հավատքը կեցած է առջևս (65-66):

Կաթոլիկության գերիշխանությունից հոխորտացող, սեփական հոգևոր տունը հիմքից կործանող այս ազգադավը Ծանթի ընդհանրացնող արվեստի մեծ նվաճումներից է:

Պալոնցը ոչ միայն պապականության աչքն ու ականջն է հայոց արքունիքում, այլև բառիս բուն իմաստով պապականության բերանը, նրա՝ համաշխարհային տիրապետության ձգտումների մունետիկը: Եվրոպացի հոգևորական-դիվանագետին մնում է գնահատել Պալոնցի բացատիկ նվիրվածությունը: Եվ ինչքան բնական են նրա հիացումի խոսքերը՝ սկզբում յուրային հայր Տոմինիկին ուղղված, ապա՝ Պալոնցին, որից վերջինս քաղցր արբեցություն է ապրում:

Նվիրակը - ... Հաճույքով կը լսեմ քու խոսքերդ, հայր Ներսես, և հաճույքով տեղեկագրելու եմ այդ բոլորը մեր սրբազան մայր աթոռին, և Հոռմի մայր աթոռը չի մոռնար երբեք և չի լքեր երբեք իր արի ու հավատարիմ զինվորները (66):

Այո՛, շատ է մեզ ծանոթ Պալոնց վարդապետը ... Միայն մեր իմացածից (իմացածների՛ց) գույճն է տարբեր. սա կրոնական գունավորում ունի:

Մեր պատմության մեջ **Պալոնց** - **դը Ծապ** (օտար քայքայիչ ուժ և նրա հայ կամակատար) կապով մշտապես ընդհանուր ճակատ է կազմվել **Օշինի** դեմ որ նույնն է՝ հայության ու հայ մտածողության դեմ:

Դրամայում հայ եկեղեցուց խորթացող ու հեռացող մարդիկ փրկարար գործություն են տեսնում «սրբազան Պապ» արտահայտության մեջ: Նրանք մոգական խորհրդավորություն են ապրում, երբ արտասանում են «մեզի հետ է սրբազան Պապին օրհնությունը...» բառերը:

Պալոնց, Ժոսիպին, Մաքսուտ Երանի, բոլոր այս կարգի մյուսները հրճվում են, երբ նվիրակից Օշինին վերագրվող հրեշավոր հերյուրանքներ են լսում: Նրանք պատրաստ են անհուն չարության կես խոսքից «հասկանալ» իրենց ժողովրդի մոլի թշնամուն, յուրովի ամբողջացնել նրա հրեշավոր զրպարտանքը, ապա «զարհուրել», «զարմանքից քար կտրել»: Սակայն էականը այս զգվելի թատերականությունը չէ, այլ անլուր բանասարկություններից նրանց ապրած հոգեպարար բավականությունը: Չէ՞ որ վերագրվող անհավանական ու անհավատալի այդ ոճրագործությունների հեղինակը իրենց հզոր թշնամին է..., և դրանք, ամենուր տարածելով, ամենին կհանեն նրա դեմ և հաղթանակը կդուրանա...

Օտար դավանանքին (ինչ գույն էլ որ ընդունի այդ դավանանքը) նվիրվելու այս ստրկահան երևույթը մեր պատմության ողջ ընթացքում (ներառյալ վերջին դարն իր ձիգ լրումով) մեծ ընդհանրություն ու բնորոշություն է բացահայտում: Եվ կանգնում է պատմականորեն աղետալի այդ երևույթի դեմ մեզ հետաքրքրող դարաշրջանին ու երևույթին շատ մոտ կանգնած վարդան Այգեկցին ու հնչեցնում իր ապրած անհուն դառնության խոսքերը ազգային մաքառման բանը հյուսելիս. «Եվ արարի քեզ առ ձեռն պատմութեան զէն, ով սիրելի, ընդդէմ թերավարժ երկմիտ քննողաց, քանզի խոցիւր հոգիս յորժամ սիրողք բաժանման տգիտաբար խոսէին վասն ... այլոց խորհրդոց...»¹:

Դը Օապը Կիլիկիա է եկել հանուն իր կարիերայի՝ կարդինալի կոչման արժանանալու և եղբոր՝ տնտեսական շահերի՝ առևտրական գործունեության առավել շահութաբերության, որոնց հաջողության պայմանը մեկն է՝ հայ եկեղեցին լատին եկեղեցուն միավորելը՝ ունիան, հավաստող թղթի ձեռք գցելը: Արդեն Արևմտաքի պետությունների դաշնակիցը լինելու, նրանցից «բարիք» ակնկալելու պայմանը հայոց Կիլիկիայի համար մեկն ու միակն էր՝ կաթոլիկության ընդունումը, որը ազգային-հոգևոր ուրացում լինելով՝ կրեեր քաղաքական ու պետական անխուսափելի այլասերում ու կործանում: Դը Օապի համար թեև միանգամայն հուսալի, բայց *երկար ճանապարհ* է լատին տարրերի ու հավատափոխ հայերի կազմակերպական ջանքերով հաղթանակի հասնելը: Այս ծրագիրը ամբողջ թափով գործում է, և դրա պերճախոս ապացույցն է *կարճ ճանապարհի* հնարավորությունը ստուգելուց առաջ (պիտի պարզվի Օշինի հետ հանդիպումով) նվիրակի տեսակցելը նախ Ռիթային, ապա «Հոռոմի սրբազան աթոռի» հավատարիմ ծառաներ Պալոնց վարդապետին ու Մաքսուտ Երանիին:

Իսկ կարճ ճանապարհը ուր որ է կսկսվի հարդարվել: Բավական է՝ Օշին Պայլը ընդունի դը Օապի հովանավորումով պատանի արքային մեջտեղից վերացնելու և գահին տիրանալու գաղափարը, որպեսզի ի տրիտուր՝ գլուխ գա այնքան ցանկալի ունիան...

Օշինը, որ ունակ է եվրոպական դիվանագիտության այս երկար ու կարճ սադրանքները կռահելու, և որը հրաշալի ցուցադրվում է հենց նվիրակի հետ նրա հանդիպման տեսարանում, այլ կերպ է հասկանում ինչպես Հոռոմի սրբազան աթոռի, այնպես էլ ողջ քրիստոնյա Եվրոպայի կենսական շահերը: Սակայն նրա՝ միանգամայն հասկանալի ու պարզ դատողությունները՝ բոլոր այդ շահերի տեսակետից անհամեմատ հուսալի ու հեռանկարային, ոչինչ չարժեն նվիրակի համար և միայն վերջինիս գայրույթն են գրգռում՝ կրքոտ կերպով տրրվելու իր նպատակին տանող «երկար ճանապարհին», որ պիտի անցնի Օշինի լայն թիկունքի վրայով...

Այո՛, նվիրակին ոչինչ չեն ասում հայոց Կիլիկիայի՝ արևելքում «քրիստոնեության սահմանապահը», «քրիստոնյա աշխարհի վերջին ամրությունը» և այդո՛ւ քրիստոնյա Եվրոպայի՝ արևելքի հետ կապի կայուն օղակ լինելու մասին խոսքերը, եթե Պայլը ոչ միայն չպիտի ընդունի նվիրակի ձեռքից «եկած բոլոր միջոցներով» արքա դառնալու առաջարկը, այլև պահանջի, որ իբրև պապի և Կիլիկիայի միջև բարեկամության ամրապնդման նպատողի՝ նա գրի, համոզի ու ներշնչի, «որ մեր ազգային զգացումներու դեմ բաներ չմտածեն, որ հայ շունչին և հայ հակումներում ձեռք չը դիպցնին», հակառակ դեպքում, շարունակում է նա՝ նվիրակին դիմելով. «Կը քանդեք մեր աշխարհը, կրնաք ավերել ու փճացնել մեզի, բայց ինքներդ ոչինչ չեք շահիր... » (71): Մինչ կհնչեին Օշինի այս խոսքերը, ինչպես ասվեց, իրար են հաջորդում Նվիրակ-Ռիթա, Նվիրակ - հայր Տոմիհիկ, Նվիրակ-Պալոնց վարդապետ, Մաքսուտ Երանի տեսարանները, ո-

¹ Հ. Ս. Անասյան, Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 184: Ականավոր հայագետի այս զրքում ուսումնասիրվել և տպագրվել է Այգեկցու երկու փոքրածավալ, սակայն բարձրարժեք քարոզ:

րոնցով դիվանագիտական խորք ու պատճառաբանում է ստանում այս՝ Նվիրակ-Օշին տեսարանը:

Հանձին Օշին Պայլի և Գվիրակ դը Շապի՝ Լ. Շանթը ցուցադրել է մարդկային հակադիր որակներ (մի կողմից՝ հանուն ազգային դավանանքի ու պետականության՝ ասպետորեն մաքառողը, մյուս կողմից՝ հանուն Գվաճման՝ անլուր խարդավողը), որոնք, ազգերի փոխհարաբերությունների առումով ևս ընդհանրացնող բնույթ ունենալով (հետևաբար և ճանաչողական ավելի խոշոր ճշանակություն), կարող են գեղագիտական հակադիր կարգերի՝ վեհի և այլանդակի օրինակներ ճանաչվել:

Որպես հակոտնյա որակներ՝ նրանք այնքան են ցայտում, որ յուրաքանչյուրի բերանում տարբեր իմաստներ են ստանում անգամ մարդկային լեզվի միևնույն բառերը:

Ահա երկուսի համար էլ սկզբունքի հրատապություն արտահայտող մի բառ՝ ճկուն բառը:

Օշինի իմաստավորմամբ ճկուն մեջք ունեցողը պետական գործերում անկայուն է, ծոմովողը, այրական (քաղաքական) կարծրությունից, սկզբունքանությունից զուրկ հաճոյակատարը: Ըկունության այս ախտերից ազատագրվողը՝ մեջքով շտկվածը, Պայլի պես ասպետն է, համառորեն մաքառողը՝ հանուն հայ պետականության:

Ինչ Շապ-Գվիրակը այդ նույն ճկուն բառով մեծարում է հայ պետականությունը քայքայող իր գլխավորած գործին առավել տրված սպասավորին. ծախվածությամբ մինչև վերջ ընկածին՝ հոտառու շան զգոնությամբ խուզարկու մատնիչին:

Ըկունության այս որակի կրողները Գվիրակ-այլասերողի իդեալն են՝ Պալոնց վարդապետի և Մաքսուտ Երանիի նման ծախու ոչնչությունները:

Լ. Շանթի մեջ արվեստագետը տեսնելու և ճանաչելու հարցում բառի «կերպարանափոխման» նման փաստերն անգամ էական են:

Իրամայում լատինամոլներից բացասական դերով քիչ են տարբերվում «չեզոք» հայ իշխանները: Նրանց այդ «չեզոքությունը», ազգային կողմնորոշումի մարդկանցից գաղտնի լինելով, ծանր անակնկալ է ստեղծում Պայլ իշխանի համար, որովհետև վճռական պահին նրանք հայտնվում են թշնամու կողմում:

Ահա մի երիտասարդ հայ իշխան՝ Թորոսը՝ երկրի ապագային այնքան անհրաժեշտ մի ուժ, որը, սակայն, անհուսալիորեն ասպակողմնորոշված է: Նեղ շահի հետապնդումը նրան «խելոք» է դարձրել. բախվող ուժերի մեջ «չեզոք» է, այսինքն՝ մշտապես անվտանգ ու շահող: Երեկ պա՛յլն էր գորել ու հաջողակ, հակվել էր նրա կողմը: Այսօր քաղաքական լծակի ծանր կողմում Զապելի տղա՛քն են՝ վաղվա տերերը, ուրեմն մնա՛ս բարով, Օշի՛ն, մնա՛ք բարով հայրենիք, հայրենիքի շահ, հայրենիքի բախտ...

Թորոս իշխանը անձնական օգուտից անդին ոչինչ չի տեսնում: Նա կարող է Օշինի սթափեցնող խոսքերից զգացվել, անգամ ցնցվել, ահեղ դատաստանի՝ Կիլիկիան տանուլ տալու մոտալուտության խոսքերից շփոթվել, կերկերալ: Բայց փույթ չէ. ժամանակը զարգանում է հօգուտ լատինամոլների՝ հակահայ դավանանքի մարդկանց, և Թորոս իշխանը ու նրա պես «նոր խելքի հայերը» կուրորեն լծվում են թշնամի գաղափարաբանության՝ հայոց Կիլիկիան կործանման տանող քաղաքական կառքին: Նա չի գիտակցում, որ կործանման է տանում սերունդների ի՛նչ ջանքներով կերտված մի հայրենիք:

Ուրույնությամբ հանդերձ՝ «չեզոքության» նույն խմորից է Սմբատ իշխանը՝ Ռիթթայի հայրը՝ դարձյալ տոհմիկ հայ իշխան: Մշտապես «երկու ոտքի վրա» լինելու, այն է՝ և՛ Օշին Պայլի, և՛ Ամորիների հետ միաժամանակ բարեկամ մնալու «խելոքությամբ» առաջնորդվող այս հայ իշխանը չի մտահոգվում երկրի բախտով: Մինչդեռ պարտավոր էր գիտակցել, որ իր՝ մեկ կամ երկու ոտքի վրա լինելու միակ պայմանը երկու ոտքերով ամուր կանգնած հայրենիքն է, ազատ ու անկախ Կիլիկիան:

Դրամատիկորեն զարգացող գործողության մեջ առանձնանում են երկու՝ միմյանց միանգամայն հակադիր դրություն՝ նույնպես մեր պատմության համար օրինաչափ:

Ահա Պալոնց վարդապետը՝ հավատափոխներից ամենից հակահայր, Հակվամի՝ խոռվարարների փաստական պարագլխին, հաղթանակի մոտալուտությունից է բարբաջում և իրենց շարքերի օրավուր խտանալուց:

Պալոնց - ... Կը լայննա, իշխա՛ն, կամաց-կամաց կը լայննա մեր շրջանակը: Խորտակվի պիտի այս փտած շենքը, և գալու է մեր դարը: Ավելի կոթը անցնի պիտի մեր ձեռքը, որ մաքրենք ու սրբենք այս Ավգերյան ախոռը: Եվ հեռու չէ այն օրը... (75):

Այս պահից քիչ հետո Օշինը պիտի մենախոսությամբ խոստովանի դառն իրողությունը. այն, որ այլևս իր հետ չեն «չեզոքները»՝ Թորոս, Սարգիս և Սըմբատ իշխանները, համախոհներ Աբել և Բագուր իշխանները, ծանր է դստեր կյանքը՝ իր համար տառապանքի նոր աղբյուր, պատանի արքան գործում է թագավորահոր գծին հակադիր...

Օշին - Եվ այսպես, մեկիկ-մեկիկ կը թափին մարդիկը շուրջս՝ ցուրտը խածած աշնան տերևներու պես: Եվ աշունը կը մոտենա իր ավարտին (89):

Ավելացնենք՝ ձմեռ է գալու, քաղաքական ծանր ձմեռ, Մխիթարի խոսքերով՝ «և ու տխուր օրեր»:

Եվ այսպես, վիճակը նետված է՝ կրոնական հիմքով քաղաքական բախումը ծայրաստիճան սրված է: Լատինականները և լատինամոլները վճռական գործողության են պատրաստվում, իսկ Օշինականների ուխտը լուծարված է. «չեզոքները» արդեն թշնամու ճամբարում են, իսկ հայ ազնվականության նշանավոր ներկայացուցիչները, ընդդիմանալով Օշինի պետական արմատական ձեռնարկներին, նրանից գժտված...

Հերոսը ողբերգաբար զարգացող պատմության դեմ միայնակ է...

Ծնորհիվ պատկերված բնորոշ դրվագի՝ «Օշին Պայլ» դրամայում մեր պատմության բոլոր էական հերոսները կան: Պատմականորեն բնորոշն այդ հերոսների կերպարներում այնքան է ընդգծված և ընդհանրացված, որ նրանց այլևայլ անուններով մենք տեսնում ենք մեր պատմության բոլոր բախտորոշ շրջաններում՝ ներառյալ այսօրվա մեր իրականությունը: Դրաման պերճախոսորեն ցույց է տալիս, որ մեզանում բացասական հետևանքի հերոսները կհարատեն այնքան ժամանակ, քանի դեռ մենք թույլ կլինենք և «վասն քաղաքական ակնկալութեանց» հոգևոր-գոյաբանական թանկ զիջումներ կանենք հզորներին: Զիջումներ, որ տանում են դեպի ազգային այլասերում ու կործանում:

Սա է դրամայի գաղափարական ու գեղագիտական խորհուրդը, որ հայ եկեղեցու արծարծումների հիմքով կուռ պատմափիլիսոփայության է հասցված:

Х. Г. ВАРДАНЯН - Осмысление политической роли армянской церкви в драме "Ошин Пайл". - Для Киликийского царства (XII-XIV) позиция папства, а именно требование присоединить армянскую церковь к латинской, имела своим последствием падение армянской государственности.

В драме "Ошин Пайл" Шант передает эту подлинную историю посредством трагедийно развивающегося действия и исторически обусловленных характеров героев. При этом достигается широкое художественное обобщение, имеющее для армянского народа глубокий историко-философский смысл.